

2254 314

ՊԱՐՏԱԴԻՐ ԶՈՈՏԵԽՆԻ-
ԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆՑԱՆԱԲՈՒ-
ԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱ-
ԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 1936 թ. ԱՊՐԻԼԻ 7-Ի
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻԱՏՈՒՄ



Կիբալյականի տոլարան

Գլավմտի լիազոր Ա-328 Պատվեր № 255

636 (Ա. 925)

Դ

ՊԱՐՏԱԳԻՐ ԶՈՇԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստափած եւ շրջանային գործադիր կոմիտեի
1936 թ. ապրիլի 7-ի նախագահության
նիստում

A 3596
1/652

1. ԳՈՄԱՆԵԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Կոլտնտեսություններում նոր կառուցվող անասնագոմերը, քնչպես նաև չին գոմերի վերանորոգումները կատարվում են շրջ. հողբաժնի թույլատվությամբ և շին տեխնիկի ցուցմունքներով, Զոռանամաբուժական պերսոնալի հսկողությամբ:

2. Արգելվում են անասնագոմերի տերիտորիայում կառուցել անտառների սպասարկման հետ կապ չունեցող բնակելի և տնտեսական շենքեր:

3. Բոլոր ֆերմաններում ունենալ ծնաբաններ, ճամապատասխան կահավորու-

կենտրոնացման
գրադարան № 2
Անդեմունք

մով (ջրի տաշտեր, դույլեր, կերամաններ, և այլն) ծնարանները, ծինը սկսվելուց 10—15 որ առաջ, պարտադիր կերպով մաքրել և ախտահանել կրեոլինով յուրաքանչյուր ծնից հետո:

4. Բոլոր ֆերմաններում գարակիչ հիմանդրության մեջ կասկածվող կենդանիների համար կազմակերպել հատուկ մեկուսարաններ, վորը կառուցել գոմից յերկու հարկուր մետր հեռավորության վրա:

Ամեն տարի, նախքան անասունների մըսուրային շրջանին անցնելը, պետք է վերանորոգել բոլոր շենքերը և ախտահանել: Բոլոր ֆերմաններում ունենալ հորթանոցներ՝ իր հարմարություններով, կերամաններ, սանրեր, խողանակներ: Մատղաշների տեղը պետք է լինի չոր, փափուկ, լուսավոր, մաքուր և 12 աստիճան: Ջերմությունով: Պրիմիտիվ գոմերում անցկացնել ողանցքներ, զեկավարվելով գոռանասնաբուժական ցուցմունքներով:

5. Անասնագոմերը պետք է պահվեն մաքուր, կատարելով ամենորյա ողափոխու-

թյուն, գոմաղբը ամեն որ դուրս տանել
գոմից հեռու, հատուկ նշանակված ցանքա-
պատաճ տեղ:

Գոմերից 50 կիլոմետր հեռավորության
վրա կառուցել գոմաղբի պահպանման հա-
մար հատուկ փոսեր՝ մեկ մետր խորու-
թյամբ. յուրաքանչյուր խոշոր անասունի
աղբի համար վերցնել 2,5 քմ. տարածու-
թյուն:

6. Բոլոր գոմերը, բացի ամենորյա մաք-
րելուց, տարեկան յերկու անգամ (ամառա-
յին և մսուրացին շրջանների սկզբներին
պետք է ախտահանել և սպիտակացնել
կրով) մսուրները լվանալ տաք ջրով և
սաղոնով, միաժամանակ պետք է մաքրել
կեղտից և աղբից գոմի բակերը. հիվան-
դություն նկատվելու դեպքում գոմերը
պիզինֆեկցիայի յենթարկել, համաձայն ա-
նասնաբուժի ցուցանիշների. գոմերի ջերմու-
թյունը պետք լինի 10-12 աստիճան:

7. Ամառային հորթանոցները՝ նախքան
սարը բարձրանալը հարկավոր է վերա-
նորոգել, կամ նորը պատրաստել հորթե-

ը ին անձրեվներից կամ շոգից պաշտպահնելու համար։ Զմեռը լավ արեվոտ յեղանակներին 1-2 ժամով մատղաշներին դուրս բեկել զբոսանքի։

8. Արգելվում ե ծխել գոմերում, կերի ողաճեստներում, խոտի դեղերի մոտ, ֆերմաներում պետք ե ունենալ հոկահրդեհացին կահավորում (տակառներ, դուզլեր, կացիներ սանդուխքներ հըշեջներ)։

2. ԱՐՈՏՆԵՐԻ ՑԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Արոտի դուրս գալուց առաջ արոտառ վայրերը մաքրել քարերից, սատկած անասունների լեշերից և վոսկորներից, վորպիսիները տեղափոխել անտօնագերեղմանները և թաղել։

2. Անասունների ջրելու աղբյուրները նորոգել, մաքրել ու հարմարեցնել։ Արոտները բաժանել ֆերմանների մեջ, ըստ անասունների տեսակի, մոտիկ լավ արոտները հատկացնել հորթերին, արտադրողներին և կթի կովերին։ Արոտները բառանել

մասերի և ոգտագործել հերթականորեն,
վորի բաժանման ժամանակ պետք է նկա-
տի ունենալ արոտավայրի ջրով ապահո-
վածությունը. Վարակիչ Հիվանդություն
ունեցող անասունների համար հատկացնել
հատուկ արոտամաս, առանձնացրված ջրատե-
ղով, հերթականությունը ապահովելու հա-
մար, պետք է արոտավայրը բաժանել վոչ
ավելի 5 մասից և արածացնել հերթով:

3. Նախքան անասունների արոտի հա-
նելը անհրաժեշտ ե՝

ա) Բոլոր կենդանիներին անսամբլուժա-
կան քննության յանթարկել, առանձնա-
ցնել հիվանդներին և կասկածելիներին.

բ) Նիհար կամ հիվանդ անասուններին
հատկացնել լավ և մոտիկ արոտներ մինչեւ
նրանց առողջության վերականգնումը:

գ) Բոլոր անասունների վրայից 100% ս-
ով հանել կաշվի բոռը և վոշնչացնել: Այդ
նպատակով զեկավարվել Խ.Ս.Հ.Մ. Ժող-
կոմատի գործող հրահանգով անատնաբուժ-
ական պերսոնալի զեկավարությամբ և
ցուցմունքներով:

4. Անասունների ամառային արոտները
քշող անձնավորությունները պետք եւ ունե-
նան հատուկ վկայականներ, իրենց զբուղ-
խորհուրդներից և սպասարկող անասնա-
բուժի կողմից, տեղի անվտանգության մա-
սին:

5. Այս արոտները, վորտեղ կան ճահիճ-
ներ, չորացնել, անասուններին ճահճային
հիվանդությունից զերծ պահելու նպատա-
կով:

6. Մսուըալին շրջանից որոտին
անցնելը պետք եւ կատարվի աստիճանա-
բար 10-15 որում պակասեցնելով տրվելիք
կերի քանակը, ավելացնելով արոտային
ժամանակամիջոցը:

7. Բոլոր ֆերմաներում անցկացնել դիշե-
րակին արոտ:

8. Բոլոր ֆերմաներում անցկացնել կո-
վերի կաթնատվության ամենորկա հաշվա-
ռում:

Յ. ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ. ՊԱՀ
ՊԱՆՈՒՄԸ

1. Նախքան մսուրային շրջանին անցնելը, Զոռանամնաբուժական պերսոնալի դեկավարությամբ կատարել անասունների խոտանում, վորից հետո բաժանվում և խըմքերի, ըստ նրանց տոհամային հատկությունների, սեռի և մթերատվության, հատկացնելով յուրաքանչյուր խմբին առանձին տեղ։

2. Անասուններին ինսամելու, կերակրելու համար ամբացվում են մշտական սպառաբեկող կազմ, վոչ պակաս քան յերեք տարի։

3. Անասուններին ամեն որ մաքրել խոչանակով, իսկ շատ կեղտուա տեղերը լվանալ, գարնանը և ամռանը հավաքել անառունների վրայից տիզերը, հանել մաշկի տակից բոռերի թրթունները և ղեկավարվել տնասնաբուժական պերսոնալի ցուցմունքներով։

4. Կովանոցները, վոչխաբանոցները, խո-

պահոցները և այլ անասունների տեղերը
պետք ե լինեն չոր, գոմերի խոնավու-
թյան դեմ պայքարելու համար անհրա-
ժեշտ է զործածել ծղնոտե ցամքար, յու-
րաքանչյուր խոշոր անասունների համար
որենկան 2-3 կիլոմի չափով, խոզերի և վոչ-
խաբների համար մեկ կիլոմի չափով։ Թույլ
չտար, վոր մեզը գետին թափվի, այլ ըռներ
դույլերով և դուրս թափել իսկ շատ խո-
նագ գոմերում պահել չհանգցրած կիր։

5. Զմեոր Զիերին լողացնել արեվոտ տաք
յեղանակներին, գոլ ջրով, քրտնած կամ
հիվանդ դրությամբ արգելվում և լո-
ղացնել։ Յուրաքանչյուր ձի պետք ե ունենա-
յուր դույլը, խողանակը, քերիչը, և այլն։

6. Տնտեսության մեջ բերվող նոր անա-
ռանները վոչ պակաս 20 որ պետք ե պահ-
վեն առանձին, (մեկուսացված) ունենալով
դրանց առողջության մասին փաստաթուղթ։

7. Կարանտին հայտարարված ժամանակ
անասունների տեղափոխումը դադարեցվում
է։ Կարանտինի յենթարկած անասուննե-
րի համար հատկացվում ե առանձին շենք,

արոտատեղ, ջրելու վայր, և սպասարկութէ կաղմ ու ինվենտար, վորոնք շփում չպետք ե ունենան մյուս տեսակի անասունների և անասնապահների հետ։ Կարանտինը հանվում ե անասնաբուժական կատարողական հանձնաժողովի կողմից։

8. Անասունների մեջ միատեսակ նշաններով (հազ, քթից, բերանից ջուր թափվելը, արնախառն միզելը, վիժելը յեվ այլն)։ Հիվանդության առաջն առնելու նպատակով կոլ վարչությունը կամ գյուղխորհուրդը պարտավոր ե հրավիրել անասնաբուժին՝ հիվանդությունը վորոշելու հսմար, պետք ե գրաւթյան մեջ գրել հիվանդության նշանները, քանակը և ում և պատկանում։ Հիվանդ անասուններին տեղափոխել մեկուսարան,

9. Կարանտինի ժամանակը լրանալուց հետո հիվանդության բացակայության դեպքում, հիվանդ անասունների ընդհանուր նախընծեր մեջ թողնել միմիայն անասնաբուժի գննությունից հետո։

10. Բոլոր գյուղերում պետք ե ունենալ

անասնագերեղմանոցներ, վորը պատրաս-
տել գյուղից զոչ պակաս մեկ կիլոմետր հե-
ռավորության վրա, արոտներից, ճանապարհ
ներից հեռու ցանկապատելով:

11. Հաճախակի վերանորոգել ցանկապա-
տի քանդված տեղերը։ Սատկած անասուն-
ների տեղափոխման համար հատկացնել հա-
տուկ սայլ, վորը ախտահանվում եւ ամեն ան-
գամ գործադրվելուց հետո։ Այդ նպատակի հա-
մար առանձնացված սայլը ուրիշ նպատա-
կի համար ոգտագործելը խստիվ արգելվում է։

12. Այս անասունները, վորոնք քշվում են
գյուղերից գյուղ (շուկա ցուցահանդես
յեվ այլն) կոլխոզի նախագահը, սովխովի
դիրեկտորը, կոլխոզնիկները յեվ մենատնտես-
ները գյուղխորհրդի յեվ անամսաբուժ սպա-
սարկող կազմից ոլետք եւ վերցնել տեղեկանք
տեղի անվտանգության մասին, վարակիչ
հիվանգությունների նկատմամբ։

13. Սանիտարական բոլոր տեսակի վերա-
ժամկումների ժամանակ (կաշվի, բոռ, մալիրա
զացիա, սիրիրախտի դեմ սրսկումներ, խողե-
րի ժանդախտի դեմ սրսկումներ յեվ այլն)

բոլոր անասնապահներ պետք է իրենց անսա
սունները ներկայացնեն հայուարարված տե-
ղը: Այդ նպատակով դյուղխորդը տուանձնաց
նում է թաղապետներ, կամ տասնապետներ,
վորոնք պատասխանատու չեն դառնում ա-
նասունների լրիվ հավաքի համար:

14. Կովերը կթել սիլոսը տարուց առաջ,
նախորոք լվանալով կովերի կրծերը յեվ սըը
բել մաքուր սրբիչներով, կիթը կատարել ա-
րագ, վորպեսզի չանհանգստացնել կովերին
յեվ ավելի կաթ ստանալ:

15. Կովը կթելիս առաջին կաթիներ կը-
թել առանձին ամանների մեջ, ապա ծծեցնել
հորթին այնքան, վորքան պետք է յեվ այ-
նուհետեվ կթել մինչեվ վերջին կաթիլը:

16. Գոմում պաշտպաննել աշխատանքի հե-
տեվյալ հերթականությունը: Աշխատան-
քը սկսել առավոտյան ժամը 5-ը անց կեսից
առաջին հերթին մաքրել անասունների տա-
կը, դուրս տանել գոմղաղը, քորել յեվ մաք-
րել անասուններին, կթել, ջուր տալ յեվ ա-
պա կերակրել: Այս աշխատանքը վերջացնե-
լուց հետո հանդիսատ տալ անասուններին

մինչեվ ճաշը ժամը | 1-ին նորից մաքրել ա-
նասունների տակերը չեվ կերակրել, վորից
հետո հանգիստ տալ մինչեվ յերեկոյան ժա-
մը 6-ը, Յերեկոյան ժամի 6-ից սկսել աշխա-
տանքները՝ մաքրել անասունների տակը,
կթել, ջուր տալ, յեվ յերեկոյան ժամը 8-ին
կերակրել, այսուհետեւ տալ հանգիստ մինչ-
եվ առավոտյան ժամը 5-անց կես:

17. Կատարել զոռանամնաբուժ կազմի ըս-
տոր կարգադրությունները՝ անասունների
խնամքի, առաղջապահության չեվ աշխատան-
քի կազմակերպման վերաբերյալ:

4. ԶՈՒԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ.—

1. Անասունների ստերձությունը վերաց-
նելու նպատակով բեղմնավորումը պետք է
կատարել նախապես կազմված բեղմնավոր-
ման պլանի համաձայն:

2. Բոլոր ֆերմաններում անցկացնել ձեռնա-
քաշ զուգավորում, իսկ այն վայրերում, վոր
տեղ բեղմնավորումը կատարվելու յեւ տեղա-
կան դոչերով, խթրակացն բեղմնավորման կան-
ույգանիյան վերջացնելուց հետո աշնանը վո-

բոշ ժամանակով արտադրողներին բաց թող
նել նախրի մեջ, ստուգելու համար:

3. Զեռնաքաշ զուգավորման ժամանակ
արտադրողների համար ընդունել հետեւյալ
նորմանները ա) յուրաքանչյուր 30-40 կր-
վին մեկ ցուլ (սեղոնում) բ) յուրա-
քանչյուր 20-25 Զամրիկին 1 հովատակ,
յուրաքանչյուր 35-45 մաքուն՝ 1 դոչ) դ)
յուրաքանչյուր 12-15 մերունին մեկ վարագ):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ,—

Նորահաս արտադրողին տրվում
է վերոհիշյալ նորմաների 50% է-
շափով: Մենատնտեսների անա-
սունները սպասարկելու համար
բոլոր գյուղերում կազմակերպել
զուգավորման կետեր:

5. Թույլատրվում է զուգավոր-
ման՝ հովատականները, զամրիկ-
ները յերեք տարեկանից վոչ շուտ
տեղական ցուլերին լեզ յերինջ-
ներին յերկու յեզ կես տարեկա-
նին վոչ շուտ, իսկ մետիսներին
յերկու տարեկան հասակում վա-

բաղներին, մերուններին (տեղական) 12-14 ամսելիան հասակում, մետիսներին 10-12 ամսականում, թոխլիներին 12-14 ամսվա հասակում:

4. Նախքան գուգավորման կամպանիան սկսելը, թե մայրական կազմը յեվ թե արտադրողներին պետք է յենթարկել բժշկասանի տարական քննության: Վարակիչ վիժումով հիվանդներին առանձնացնել յեվ հատկացնել տռածին ցուլ.

6. Զուգավորման աշխատանքների սկսվելուց չերկու ամիս առաջ արտադրողներին պետք է տալ լրացուցիչ խտացրած կեր՝ ցուլերին յերկուսից յերեք կիլոգրամի չափով, չոփատակներին 3-4 կիլ. չափով, խոլերին 1 կիլոգրամի չափով, վարադներին 1 կիլ. չափով:

Արտադրողներին պահել մայրական կաղեց առանձին:

Զուգավորման գրանցումները կատարվում են նույն որը, իսկ գամբիկներին հովատակից հրաժարվելուց հետո:

7. Հղի մայրերին վերաբերվել խնամքով, չը
քշել ընդհանուր նուխրից առանձին սլահել
յել մեղմ վարվել: Ծնելուց յերկու ամիս
առաջ առտիճանաբար ցամաքեցնել: Հղի կո
վերին յեվ զամբիկներին տեղափոխել ծնա-
բան ծնելուց 10-ը որ առաջ յեվ դուրս բե-
րել 10-ը որ հետո:

8. Ծնաբանում սահմանել ամբողջ որվա-
հերթապահություն (գիշեր յեվ ցերեկ) ծն-
ած կենդանու ընկերքը անմիջապես չհ-
սացնել գոմից յեվ խորը թաղել, ախտահա-
նել կովի ծնած տեղը բոլոր ծների ղեղքե-
րից հետո: Վարակիչ վիժումով հիվանդ կո-
վերին արգելվում և ծնաբանում ծնացնել:

9. Նորածին խոչկորներին դնել փափուկ
պտարաստած արկղի մէջ, չերկու ժամը մեկ
անգամ ծծեցնել, նախարոր մաքրելով մար
պտուկները, նորթերին տեղափոխել նորթա-
նոց յեվ մինչեվ 20 որական հասակը ծծեցնել
որական չերեք անգամ, վորէց հետո կարելի
ին ծծեցնել որական չերկու անգամ:

—10. Ինչպես մատղաշների մարմինը, նույնպիս ել նրանց տակը որեկան լերկու անգամ մաքրել և ցամքար փռել. հրբթերին առաջին խոկ խակը տալ ծներուց լերեքից 4 ժամ հետո այնուհետեւ ծծեցնելով լուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ: 20-25 որեկան հասակից սովորեցնել խոտի, քաշած կաթի, խտացրած կերի կերակրմանը, քաշած կաթը խմացնել լեռացնելուց հետո 38 աստիճան ջերմությամբ:

11. Մատղաշների եզերը արուներից բայցանել 6-7 ամսական հասակում: Տոհմացին նպատակի համար նշանակված մատղաշներին առանձնացնել և տանել հատուկ խընամք:

5. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ.

1, 1936թ. կերի բաղա ստեղծել այն հաշվով, վոր 36-37 թթ. ձմեռային շրջանում անասունները ապահովված լինեն հետեւյալ քսնակության խոտով:

(Մեկ գլխին սեղոնում չհաշված այլ կերեր):

<i>ԽՈՏԻ ՔԱՆԱԿԸ</i>	<i>ԽՀՏ. ԿԵՐ (ԳՄՎԲ)</i>	<i>ԿԵՐ. ԿԵՐ (ԳՐԲԸ)</i>	<i>ԿԵՐԱԿՐՄԱՆ ԱՐԵՎԸ</i>
ա) Խավերին, մասակներին 8-10 ցենս.	—	—	180-150
բ) Յերենջներին, աշտոքեր, 6-7 տ.	—	—	150-180
գ) Մողեներին 5-6 տ.	—	—	166-140
դ) Արտ. ցուերին և հոգասալ. 10-12 տ.	—	—	200-220
յ) Ցեղներին 9-10 տ.	—	—	210
շ) Խոշոր ձեւերին (կորց.) 8-10 տ.	—	—	180
թ) Մաղեսներին 7-8 տ.	—	—	150-130
ը) Զիռ. մատղաշներին 4-6 տ.	—	—	150-130
լ) Գոչխար և այծ 1-2 տ.	—	—	90-100
լլ) Մայլ լողերին 2,-3 ցինտ.	2,-3	—	100-120
լլլ) Խաշորներին 2-2,5 տ.	—	—	100-120

2. Կոլխոզ վարչությունը աշնանը հատուկ ակտով յուրաքանչյուր ֆերմայի վարիչին և հանձնում համապատասխան քառակությամբ կեր, լենելով վերոհիշյալ նորմաններից:

Ֆերմայի վարիչը ստացված կերը բաշխում և ըստ բրիգադների՝ համապատասխան բրիգադայում ունեցված անասունի կենդանի քաշի և մթերատվության:

3. Անասուններին կերակրել հետեվյալ կարգով՝

ա) Կենսապահ կեր տալ, նայած կովի կենդանի քաշին 2,5 կերի միավորից մինչեւ 4 կերի միավոր, բացի կենսապահ կերից պետք և տրվի նուև արդյունավետ կեր հետեվյալ հաշվով՝ յերկու կիլո կաթ տալու գեղքում կովին տալ մեկ կերի միավոր, 4 կիլո կաթ տալու գեղքում յերկու կերի միավոր և այդպիս ավելացնել համաձայն կովի կաթնատվության:

բ) Յերիտասարդ կովերին պետք և տալ մեկ կիլոյի չափով խոտացրած կեր իրենց

աճի համար, իսկ նդի կովերին հորթերը ա-
ձեցնելու համար:

գ) Մատղաշներին պետք է կերտելու հե-
տեվյալ հաշվով. յեթե մատղաշների յուրա-
քանչյուրը կշռում է մինչեւ 70 կիլո, ապա
այդ խմբի յուրաքանչյուր 100 կիլո կեն-
դանի քաշին տալ 3 կերի միավոր, 70-150
կիլո կշռող մատղաշներին յուրաքանչյուր
100 կիլո կենդանի քաշին տալ 2,5 կերի
միավոր, 150-250 կենդանե քաշ ունեցողնե
րին յուրաքանչյուր 100 կ. կենդանի քաշ-
ին տալ 2 կերի միավոր:

դ) Մեկ կերի միավորը հավասար է 800
գրամ գարու, 2,5 կիլո լով խոտի, 3 կիլո
զարու դարմանի, 5 կիլո ցորնի դարմանի,
800 գրամ բամբակի քուսպի, 4 կիլո կար-
տոֆիլի, 10 կիլո սիլոսի, 10 կիլո ճակնդե-
ղի, (Արանցից յուրաքանչյուրը առանձին
վերցըտծ):

յե) Կերտերաժինը կողմել հետեվյալ կե-
րով:

Յեթե վերցնենք մեկ խումբ, վորոեղ կտ
20 կով, կովերի միջին քաշը 300 կիլո լի, վո-

ըոհք միջին հաշվով յուրաքանչյուրը տալիս է 4 կիլո կաթ, այդ հաշվով մեկ կովին հասնում է՝

Կենսապահ կեր 300 կիլո կենդանի քաշի համար 3 կերի միավոր, մթերատու կեր 4 կիլո կաթի համար 2 կերի միավոր. Բնդամենը մեկ կովին 5 կերի միավոր. Այս խմբի յուրաքանչյուր կովին պետք է տալ մոտավորապես հետեւյալ քանակությամբ՝

խոտ	5	կիլո . . 2	կերի միավոր
Գարու գարման .	3	» . 1	»
Ճորենի գարման	2,5	» . կեռ »	»
Գարի	0,8	» . . . 1	»
Սիլոս	5	» . . . 0,5	»

Բնդամենը 5 կերի միավոր

Այսպիսով 20 կովին որեկան պետք տալ 100 կիլո խոտ, 60 կ. գարու գարման, 50 կիլո ցորենի գարման, 16 կիլո գարի, չեղ 100. կ. սիլոս.

Նույն ձեզով ել պետք է կազմել մյուս խմբերի անսասունների կերաբաժինը, իտացիւ-

նաև կերպով կերտակրել նաև բանող անուստուներին յեզներին, ձիերին ավելացնելով կենսապահ կերին Յ կերի միավոր միջակ աշխատանքի համար, 4-5 կերի միավոր, ծանրաշխատանքի համար և 2 կերի միավոր թեթեվ աշխատանքի համար:

3. Հյութալի կերը կովերի կերբաժնում պետք է լինի 5-10 կիլո սիլոս, 10-15 կիլո ձակնդեղ, 5-8 կիլո կարտոֆիլ. յեթե այս յերեք կերերն ել տրվում են միաժամանակ, ապա կերբաժինը այսպես պետք է կազմել վոր հյութալի կերերի քանակը չափնի մեկ չերբորդից:

4. Աղը պետք է տալ կոշտ (քարի ձեվով) գնելով այն ձմեռութին շրջանում ցուրտքանչուր կովի մսուրքում, իսկ ամառային շրջանում՝ հատուկ պտուրաստած տրկղներում, վորոնք դրված են լինում կովերի գիշերել լու հրապարակի մեջ, նույն ձեվով աղ տալ նաև մյուս տեսակի անասուներին:

5. Մենատնտեսերի և կոլտնտեսականների անասուների համար հատկացնել հատուկ արտատեղեր, իսկ անասուններին

արտահիշքանում պահելու համար նշանակել
առվաբազարներ և կազմակերպել նոխիր-
ներ:

6. Հորերից սիլոսը հանել աստիճանաբար,
ուղղահայտ կտրվածքով: Որվա պահանջից
ավելի սիլոս հանելը արգելվում է: Սառած
դրությամբ սիլոս չի կարելի տալ անասուն
ներին, նորի կովերին ծնից յերկու ամիս
առաջ դադարեցնել սիլոս տալը:

7. Անասուններին կերակրել որը յերեք
անգամ սահմանված ժամերին մաքուր մը-
սուրներում: Արմատապառւներով կերակրե-
լիս ջարգել, լվանալ և ապա ուտեցնել,
փչացած կամ վատ վորակի կերերով չկե-
րակրել:

Արգելել անասուններին սալոմով (ծղնատ)
կերակրելը: Ծղնոտը պետք է կալսել կամ
սիլոսահատով ջարգել, ապա կերակրել:

8. Բնտիր կերերը պետք է առանձնացնե
մատղաշների, արտադրողների և նորի ռայ-
րերի համար: Հորի անասունների վերջին
շրջանում դարձանը պակասեցնել, փոխարեն
տալ խոր կամ խոտացրած կեր:

9. Զմռանը անասուններին սառցախառն
ջրով չջրել, նման դեպքերում ունենալ տա-
կառներ մեկ որ առաջ ջրով լցնել, աղատալ
խմելու։ Զմեռը անասուններին ջրել
որական լերկու անդամ։

Հոտած և կեղտոտ ջրով չըջրել անասուն-
ներին։

6. ԿԵՆԴԱՆԻՆՆԵՐԻ ՈՒՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Բանող լեզներին, ձիերին բաժանել
իմրերի ըստ իրենց աշխատունակության։

2. Գյուղատնտեսական աշխատանքները
(գարնանացան, աշնանացան, բերքահա-
վաք) սկսելուց մեկից 1,5 ամիս տուղ
քաշող ուժին հանդիսուտ տալ։

Արգելվում է արտադրող հովատակին ող-
տագործել ալդ աշխատանքներում։

3. Մաղլաններին ծնից 3—4 ամիս առաջ
աղատել բոլոր տեսակի աշխատանքներից,
իսկ բեղմնավորվելուց հետո ծանր աշխա-
տանքից, առանձնացնել ընդհանուր յե-
րաժակական (իլիայից) ծծմեր զամբիկներին
լերկու ժամը մեկ անգամ աշխատանքից

ղագար տալ քուռակներին Հերակլելու համար:

4. Արգելվում և քուռակներին յեվ աչառներին Յ տարեկանից շուտ աշխատեցնել:

5. Բոլոր բանող անասունների համար առանձնացնել իրենց համապատասխան լըծառարքը, ամիսը մեկ անգամ վարչությունը պարտավոր Ե ստուգել լծկաների յեվ լծասարքի դրությունը:

6. Խոտիվ արգելվում և անասուններին ծեծելը, նորմայից շատ քեւնելը, սոված կամ հողնած ժամանակ քշելը. վերքեր ունենալու դեպքում լծել կամ հեծնել:

7. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՑԴՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՌԱՆԱՄԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. —

1. Աշխատանքի կազմակերպման գործում դեկապարվել հողժողկոմատի աշխատանքի կազմակերպման մասին ունեցած վորոշումնել:

2. Այս կանոնների իրագործման պատասխանավորթյունը դրվում, և դյուղիորհուրդ

ների, կորչարչությունների նախագահների
յեվ առլրանքալին ֆերմանների վարիչների
վրա:

3. Յուրաքանչյուր կոլտնտեսություն յեվ
գյուղիսորհուրդ պետք և ունենա հատուկ
մատյան զուսնամարուժական պերսոնալի
ացցելունների թերությունների վերաբերյալ
արմած միջոցառումների կանխման համար:

4. Այս կանոնների իրազործման հսկողությունը գրիպում և հաղբաժնի վրա:


5. Սույն կանոնները խախտողները յենթական վերաբերյան պատասխանատվության մինչև 50 ոռութիւնը դրամական առւգանքի կամ մինչև 15-որյա հարկադիր աշխատանքի:

6. Սույն կանոնները չարամտորեն խախտողները, մասնավորապես կոլխոզի նախագահները յեվ առլրանքալին ֆերմանների վարիչները բայցի վարչական միջոցառումներից լինենթական յենքը քրեական պատասխանագիրը, վորովես պաշտամական հանցանք կատարողները:

Ա.Ա.ՎերԴՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԱԲԾԱԴԻՐ

ԿԱՌԵՑԵ

342



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038192

10401